

ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱՀՈՐ ԴԵՊՔԵՐԸ

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՑԵԱՆՑԻ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Նորանցած 1892 թւականի հոկտեմբերին ռուսազգի պ. Խորի Վեսելովսկին մի նամակով գիմել էր ինձ, որ գրեմ իմ համառօտ կենսագրութիւնը և ուղարկեմ իրան։ Այսպիսի առաջարկութիւններ արել են և ուրիշները, բայց ես ժամանակ չը գտայ շուտով կատարելու իմ յարգելիների առաջարկութիւնը։ Մարդիկ սովորաբար յետաձգում են իրանց կեանքի և կտակի գրելը, ենթադրելով՝ որ դեռ ապրելու են, ուրեմն և ժամանակ կունենան այդ բանն անելու, մոռանալով Աւետարանի ասածը, թէ՝ «Է գիտես յորում ժամու գող զայ»։ Կէս զար ապրելուց յետոյ՝ աւելին ձգելով Արարէի կամքին՝ ես վճռեցի ահա զրել իմ կեանքի գլխաւոր դէպքերը, այն դէպքերը, որոնք որ և է կերսով ազգեցութիւն են ունեցել իմ մոռաւոր և բարոյական զարգացման վրայ։ Եւ այս արի ես այն համոզմամբ, որ կեանքից ասացած փորձառութիւնն ես մի հարստութիւն է յետնորդներին կտակելու արժանի։

I

Ես ծնւել եմ Խաչէն գիւղումը, որ գտնւում է Թիֆլիսից դէպի հարաւ վաթսուն վերսու հետաւորութեան վրայ հին Բողնոփորումը, իսկ այժմեան հօլնիսումը։ Գիւղի «Խաչէն» անւանելու պատճառն այն է, որ նրա այժմեան բնակիչները անցեալ դարի վերջերում գաղթել են Ղարաբաղի Խաչէն մհամից և այստեղ

ասել խաչէնեցիք։ Գիւղացիք մինչև այսօր էլ պահպանել են իրանց բնիկ մըհալի թէ բարբառը և թէ սովորութիւնները։ Պապը գաղթել է Խաչէնի Սէցդիշէն գիւղից, ուր նա յայտնի է եղել իրակ Աղանց Վերդի։ Ես զէպք ունեցայ այցելել ացդ գիւղը և տեսայ աչքովս Աղանց աղբիւրը, Աղանց ձորն ու բազը և Աղանց ճըղպրէն (լնկու զենին)։ Այդ ժառը ես որ տեսա՛՝ մի ահազին կոճղ էր, բոլորովին չոր, բայց զիւղացիք այդ վաղեմի յիշատակը չէին ուզում ոչընչացնել։ Մեր ցեղից միայն մի պառաւ կին կար Միգունց Արիթինի տանը։

Հայրս Աղանց Ստեփանն էր, իսկ մայրս՝ Հռիփսիմէն (Հուռի), Տէր-Անդրէասեանների տանից։

Այդ ժամանակ ծննդեան մատեաններ պահելու սովորութիւն չը կար. մէկի ծննդեան տարին յիշում էին նոյն տարին պատահած մի որ և է նշանաւոր զէպքով։ Իմ ծննդեան տարին նշանաւոր զէպքը եղել է այն, որ Մեծ-Մասիսը շարժւել է և Ակոռին տակնին արել իսկ այդ պատահել է 1840 թւականին։ Մայրս ասում էր, թէ քեզ մկրանել ենք Մեծ պատումը Կազարոսի յարութեան տօնին, քո ծնւելուց ութ օր յետոց։ Այս բանին ես կարևորութիւն չը տալով չեմ հետաքրքրել սոսուղելու, թէ այդ տարին Քրիստոսի բարեկամը մը ամսի քանիսին է յարութիւն առել։

Իմ մանկութիւնն ու պատանեկութիւնը ես մանրամասն նկարագրել եմ «Արութիւն և Մանուէլ» վէպիս մէջ։ Այդ վէպի Արութիւնը ես ինքս եմ։ Դրանում բաց եմ թողել միայն մի սովորականից դուրս պատահած զէպք, որ սակայն կենսագրական տեսակէտից մեծ նշանակութիւն ունի։ Այդ զէպքը իմ մանկական սիրահարութիւնն է, որ մեծամեծ աղէտների պատճառ դարձաւ և սկիզբն զբաւ այն հալածանքին, որին ենթարկեց ինձ հայրը։ Ես չը գիտէի զիռ ես որ մեզանում նոյն իսկ ամուսնական սէրը մի դատապարտելի յանցանք է, և դա է եղել Քրիստոսի խաչւելու միակ պատճառը։ Սակայն սուրբ էր իմ սէրը, անմեղ, անարատ, անիմանալի և անգիտակից։ Այսպէս կարող էին լինել միայն Աղամն ու Եւան անմեղութեան դրախտումը իրանց մանկական հասակում, նախքան բարոյ և չարի գիտութեան ծառի պաղից ճաշակելը։ Ինչպէս խորամանկ օձը՝ նայելով նրանց անմեղութեան վրայ՝ կա-

րող էր զանազան կասկածներ տանել և աշխատել նրանց սրտի մէջ ևս ձգել այդ կասկածը, միշտ այսպէս վարւեցան ինձ հետ էլ իմ անմեղ սիրոյն ականատես եղողները:

Բանն ահա ինչպէս էր: Նամշուլդա գիւղի քահանայի մօռ կարդալիս ես դասլնկեր չունեի, իսկ խաղընկերներս իմ հասակակից աղջկէք էին: Սրանց մէջ ամենից փոքրը եօթը տարեկան մի աղջիկ էր, անունը Մայիկօ: Սա իւր ծնողաց մին ու ճառ զաւակն էր. այս պատճառով էլ նրան միշտ զուգած ու զարդարած էին պահում, որով ամենից սիրուն էր թւում իմ աշքումը և ամենից շատ դուր գալիս: Ինչպէս երեխան սիրում է իւր զուգած տիկնիկը, անդադար շտկում է նրա զուգուր, գգւում, համբուրում, ես էլ ճիշտ այդպէս էի վերաբերում Մայիկօին: Աղջկայ մայրը հակառակ չէր իմ այսպէս վերաբերելուն, ընդհակառակը նա աւելի ևս խրախուսում էր ինձ, արծարծում էր իմ սէրը, զանազան անուշեղէն ուտեցնելով: Աղջիկն էլ մօրիցն ստացած մրգեղէնն առանց ինձ չէր ուտում: Այսպէս ահա իմ սէրն օրէցօր աւելի անեց և աւելի տաքացաւ: Սիրոս այնպէս կպատ Մայիկօին, որ էլ չէի կարողանում նրանից բաժանել, միշտ ուղում էի նրա հետ նստել, նրա համար երգել: Նրա անունով գրում էի սիրոյ երգեր, ի հարկէ նախագեղարւեսուական, բայց սքանչելի երկուսիս համար էլ քաշում էի և իմ ու նրա պատկերները կողք կողքի, ինչպէս հարս ու փեսայ, ի հարկէ նախապատմական ճաշակով, բայց մեր երեւակայութեան համար շատ զմայլեցուցիչ: Դասերս այլ ևս չէի սերտում և բերան անում առաջւան ժրածանութեամբ. այժմ նրանք շատ չոր էին թւում և շատ տաղուալի, ինչպէս որ էին իրօք էլ:

Տէրտէրս նկատեց այս, սկսեց յանդիմանել, ուզեց ինձ հասկացնել, որ իմ արածը լաւ բան չէ, և կարող է շատ վատ հետեւանքներ ունենալ: Ես լսում էի և զլիսի էի ընկնում թէ ինչ է ուղում ասել, բայց այս հանգամանքն աւելի էր սաստկացնում իմ սէրը դէպի Մայիկօն:

Մինչեւ այդ ժամանակ ես որ մի հրաշք էի գեղացոց աչքումը իմ բնատուր շնորհքովս, այդ հանգամանքի պատճառով դարձայ մի հրէց: Զը նայած տասը տարեկան հասակիս, ես միամիտ

էի խենթութեան չափ, մինչդեռ այդ հասակում բոլոր իմ ծանօթ երեխսէքը շատ սատանաց էին և խորամանկի Խենթութիւնս այն աստիճանի հասաւ, որ ես սակսեցի իմ լսած հէքիաթների հերոսների պէս ջունուն դառնալ և սար ու ձոր թնդացնել իմ սիրուհու անունով։ Ես այդ ժամանակ մի փոքրիկ Դոն-Քիշոթ էի, նրա պէս խենթ, բայց նրա պէս էլ անվեհեր և երևակայող... Ամառը, երբ Մայիկօն սարումն էր լինում, ես ոչ մի բանից չը վախենալով վեր էի կենում կէս գիշերեն և թաքուն փախչում նրա մօտ։ Սովորական ճանփով չէի գնում, որ տեսնող չը լինի, այլ խոր ձորերով և խիտ անտառներով, որոնք լիքն էին ամեն տեսակ գաղաններով... Երբ բանը այս չափազանցութեանը հասաւ, իմաց տւին հօրս, նա էլ ապսպրեց, որ ինձ տանեն մեր տուն, ուր ինքը դիտէր, թէ ինչպէս կը խրատէր ինձ։

Ճարըս ինչ, պէտք է գնայի, և գնացի։ Հայրս երեսիս չը նացեց բնաւու Մայրս ինձ պաշտպանելու համար մի քանի անգամ ծեծւեց։ Իմ մանկական սէրն իմ մէջ դառաւ մի տեսակ հոգեկան ցաւ և սկսեց մաշել ինձ։ Մայիկօիս կարօտը քաշելով՝ սկսեցի օրէցօր նւազիլ։ Որքան նւազում էր մարմինս, այնքան զիւրազրդիու և զիւրազդաց էի դառնում և այնքան քնքշանում։ Կոպիտ գործ ու խօսք տանել չէի կարողանում, ուրիշների թշւառ վիճակը, նրանց աղքատութիւնը, մերկութիւնը, տկարութիւնը այնքան ունեցողների վրայ էին ազդում, ինչքան ինձ վրայ, որ միան ականատես էի։ Այս զիւրազգացութիւնն իմ մէջ մի տեսակ տկարութիւն դառաւ մի տեսակ ցաւ։ Մի առաւօտ մայրս իմ ձեռքով մի բաժին կերակուր ուղարկեց մի հիւանդ օտարականի համար։ Հիւանդը շատ զգածւեց և լաց եղաւ։ Պատմեց, թէ ինքն էլ ունի ինձ պէս երեխսէք, որ եթէ մեռնելու լինի, նրանք որբ պիտի մնան, և սկսեց ինձ օրհնել։ «Դու շատ շնորհալի տղայ ես, ասաց, և ժամանակով շատ լաւ և շատ երևելի։ մարդ կը դառնաս»։ Ես չը կարողացաց լացս պահել։ Երբ դուս գնացի, մինչև կէսօր մայրս չը կարողացաւ իմանալ, թէ ինչու եմ լաց լինում։ հէնց որ ուզում էի պատմել, հեկեկանքը խեղդում էր ինձ, չէի կարողանում ուղիղ խօսք արտաքերել։ Լաւ, լաւ, հանդարտւիր, ասաց մայրս, յետոյ կը պատմես... Իսկ յետոյ պատմեցի, որ այն զարիբ մարդը

շատ հիւանդ է, պահող չունի, հաց տւող չունի, պէտք է հոգ տանել նրա վրայ: Մայրս գթոտ կին էր, խնդիրս անուես շարաւ, բայց այնու ամենայնիւ այն մարդը մեռաւ և իմ յիշողութեան մէջ թողեց մի անշնջելի հետք:

Իմ նւազելուս հետ նւազում էր և սնունդաւ Շատ կերակուրներից այնպէս էի զգւում, որ նայել երեսներին չէի կարող, գինի չէի կարող բերանս առնել, շատ մրգերի նոյն խոկ ծառից զգւում էի, փըռըշնին տեսնելիս գլուխս ցաւում էր, սղոց սրելիս պէտք է շատ հետու. փախչէի, որ ճայնն ակացիս չընկնէր, և ըստ սարսուէի բոլոր մարմնով: Այսու ամենայնիւ Մայիկօն մտիցս չէր ընկնում: Նորանոր երգեր էի յօրինում, որոնց մէջ կարօտս էի յաշանում ինչպէս Քեարամն իր կորած Ասլուն: Գիշերները տեսնում էի երազումն, ուրախութիւնիցս զարթնում էի իսկոյն, բայց տեսնելով որ երազ է, սկսում էի լաց լինել: Լացիս իսկական պատճառը չէի յայտնում, ասում էի՝ գլուխս է ցաւում: Բայց մէկ օր յայտնեցի մօրս: Մայրս կարծերով որ աղջկայ մայրն ինձ կախարգել է, հօրս խնդրում է, որ գիր անող մոլլաներին զիմէ և ինձ փրկել տայ այս ցաւից: — Գիր—միր հարկաւոր չէ, պատասխանել էր հայրս, ես ինքս շատ լաւ գիր կանեմ: Եւ ճշմարիտ, մի գիշեր էլ, երբ ըստ սովորութեան սկսեցի լաց լինել և սուս չը կացայ, հայրս վեր կացաւ, մի փափուկ ճիպոտ վեր առաւ, որ իր լաւ գիրն անի ինձ վրայ, ես իսկոյն վեր թուայ տեղիցս, և շապկանց ու ոտարոքիկ փախայ մինչեւ գեղի ներքի թաղը՝ քեռանցս տունը, ուր ինձ պատապարեցին, իմանալով բանի հանդամանքը: Մայրս ինձ այդտեղից փախցնել տւաւ քաղաք—Թիֆլիս—քրոջս մօտ, ուր և մնացի մինչեւ մոտայ ներսիսեան դպրոց 1853 թւականին: Այդտեղ ինձ ընդունեցին նախավերջին դասատանը, բայց ինչ որ աւանդում էր այդտեղ, ես արդէն գիտէի, այնքան ողորմելի մի բան էր այդ ուսումնարանը, թէև Շանշեանն էր տեսուչը: Իմ այսուեղի դպրոցական կեանքը ես նկարագրել եմ «Արութիւն ու Մանուէլի» երկրորդ հրատարակութեան երկրորդ գրքի առաջին գլխումը:

Այս ժամանակ ես այնքան հասունացայ և գիտակցութեան եկայ, որ իմ մանկական սիրահարութեանս խենթութիւն լինելը զգալի եղաւ ինձ համար, և ինձ մեղաւոր ճանաշելով ասում էի

աղօթքիս մէջ՝ «Տէր, մի՛ յիշիր զմեղս մանկութեան իմոյ...» Այդ սիրոյ տեղ իմ մէջ զարթնեց մի նոր սէր, սէր առ ուսումն և աս էլ նոյնքան աղետալի դարձաւ ինձ համար, ինչքան և առաջինը։ Տոգորուելով նորանոր դաղափարներով, աղատելով շատ նախապաշտունքից, սկսեցի անխնայ յարձակւել այդ նախապաշտունքների դէմ, որով դարձեալ զայրացրի հօրս և նա ոչ միայն չօգնեց ինձ, որ ես շարունակեմ ուսումն, այլ կրկին անդամ դուրս արաւ ինձ տանից իբրև Աստուծոյ ծրից դուրս եկած անառակ որդու։ Այս մասը նոյնպէս նկարագրած եմ յիշեալ վէպիս մէջ և դրանով էլ վերջացրած։ Այսուհետեւ ինչ որ ասելու եմ դրա շարունակութիւնը կը լինի առանց նրա վիպական ձևն ունենալու։

II

Կոյնառեսակ կենդանիք իրանց միջից հալածում են արտաքուստ իրանց նման չեղող ձագերին։ Այս մի այնպիսի յատկութիւն է, որով անբանները ժաքառում են իրանց տեսակի կերպարանափոխութեան դէմ և թէպէս չեն կարողանում տեսակափոխութեան առաջքն առնել, բայց այդ գործն այնքան դանդաղցնում են, որ նա կատարուում է անհուն դարերի ընթացքում։ Անրանների այս յատկութիւնը գտնւում է և բանականների այն դասակարգի մէջ, որոնք անւանում են կետադէմ, խաւարամիտ և պահպանողական։ Եթէ բանականների մէջ չը լինէր այս յատկութիւնը, լուսաւորութիւնը յառաջ կերթար անընդհատ և հակայական քայլերով, բայց այսպիսի բան չը կայ բնութեան մէջ, ամեն կենդրունախոյս զօրութիւն ունի և իր կենդրոնաձիգը։ Այս հանգամանքը մի արիք չէ, այլ բարիք, պէտք է գիտենալ միայն թէ ինչպիսի զէնքով պէտք է պատերազմել տգիտութեան և խաւարի դէմ և միանգամ ընդ միշտ համոզական է, որ այդ պատերազմը վերջ չունի, և որ այս դարում գործ դրած զէնքը միւս դարում կարելի չէ գործածել իբրև հնացած և անպէտք։

Կոյնուրոցն լինել՝ կը նշանակէ մի կաղապարով ձու լւած հասարակութիւնից աարբերւիլ։ Այդպիսին կը լինի միւսների համար մի հրէշ, նրան մի տեղ կը խաչեն, մի այլ տեղ կը բանուարկեն։ նրան կը համարեն խենթ, վտանգաւոր, և այլն։ Այդպիսին արդարեւ մի

խնմթ է, մի ցաւագար, գիտակից ոչինչ չը կաց նրանում, ամեն ինչ կատարում է բնազդմամբ, մի ներքին անդիմադրելի դրվումից, մի աներևոյթ զօրութեան թելաղրութեամբ։

Երբ որ հայրս դուրս արտւ ինձ երկրորդ անգամ, ինձ համարելով անառակ որդի, ես ընդհակառակը ինձ համարեցի Եսաւից հալածւած մի Յակոբ, եղբայրներից վաճառւած մի Յովսէփ, Եգիպտոսից փախած մի Մովսէս։ Մեծ էր հաւատու, որ ունէի դէպի իմ Արարիչս, շատ մեծ։

Ես ընկաց երկրիս ովկիանոսը ինչպէս մի հէքիաթական աշխարհի մէջ, ինչպէս մի առասպելական, այլ ոչ իրական կեանքի մէջ։ Այդ կեանքի հետ ես բնաւ ծանօթութիւն չունէի, դրսի կեղեն էի տեսել միայն և շատ հաւանել, բայց չը գիտէի, որ նա մի զարդարուն գերեզման է, չը գիտէի որ նրանում զարհուրելի գազաններ և միջատներ կան։ Շարունակ եօթը տարի պտըտեցի ես այդ զզւարանումը, որ տշխարհ է անւանում և կեանք, բայց պտըտեցի ինչպէս կախարդւած, ինչպէս հիպնոզացրած, որ չը գիտէ ինքը, թէ ուր է զնում և ինչ է անում, բայց որ կարծես զնում է մի արդէն նախասահմանւած ճանապարհով։ Ինչպէս հնդկական հաւատով մարդուա հոգին մի նախասահմանութեամբ անցնում է զանազան աւարկանների և կենդանիների միջով, որ նրանցում զտւի, մաքրւի և ապա թէ միանայ Բրահմալի հետ, ճիշտ այսպէս եմ գոնում այսօր և ես իմ կեանքը։ սա ևս անցել է և դեռ պիտի անցնի զանազան կենդանիների միջով—օձերի, գորտերի, էշերի, կապիկների, գալյերի, ոչխարների և այլ կենդանիների, որ աւելի մաքրւի և միանայ իմ պաշտած անիմանալի Զօրութեան հետ, այն Զօրութեան, որի հաւատը միշտ ունեցել եմ և զգացել իմ մէջ իբրև ինձանից անբաժան մի սիրտ և մի հոգի։

Եօթը տարուց յետոյ ես ընկաց մի տպարանական ձուլարան իբրև աշակերտ, որ այդ արհեատը սովորեմ։ Այս բանը ես արի ոչ թէ գիտակցաբար, ոչ թէ արհեատի նշանակութիւնն ըմբռնելով՝ այլ անգիտութեամբ։ Կեանքի մէջ—թէ դուրսը սար ու ձոր ընկած, և թէ քաղաքի մէջ, ամբողջ եօթը տարւայ ընթացքում աւելի քան եօթն անգամ եօթը տեղ մոնելուց և դուրս գալուց յետոյ հիմա էլ մտաց ձուլարան նոյն անգիտակցութեամբ և նոյն

աներեոյթ զօրութեան գրդմամբ, որ ինձ ման էր ածում իրեւ մի կոյլի, այնքան միայն խնամք տանելով՝ որ ես խորխորառաների մէջ չընկնիմ; Խաւար էր այդ ժամանակ մեր աշխարհը, շատ էր խաւար. լուսաւոր մարդուն պէտք էր լավտերով փնտրել: Ոչ գիր, ոչ գրականութիւն, այլ սորկութիւն, ճորտութիւն, գերութիւն, բոնութիւն — մի դժոխք իր բոլոր դիւտական և ձիւտղական հրէշներով:

Յայտնի է, որ տառ ձուլելը, երբ այժմեան արագաշարժ և դիւրաշարժ մեքնաները չը կային և ամեն ինչ ձեռքով էր շինւում, մի տաժանելի աշխատութիւն էր պահանջում; բայց այդ տաժանելի աշխատութեան մէջ շունչ քաշեցի ես այնպէս աղատ և քաղցր, ինչպէս Անդէրսէնի անձոռնի բատիկը, երբ հաւի ու կատուի ձեռից աղատուելուց յետոց ընկնում է ջրի մէջ և լողում իր ուղածի չափ, կամ ինչպէս Աղամը, երբ դժոխքից աղատուում է և նստում Քրիստոսի կողքին Զիթենեաց սարի վրայ: Սրանից պէտք է գուշակել, թէ որքան տաժանելի պիտի լինին եղած ուրեմն անցած եօթը տարւան քաշած օրերս:

III

Չուլաբանն ինձ համար դրախտի փոխարկողը եղաւ նրա տէրը, որ էր պ. Համբարձում Էնֆիաճեանցը: Սա մէկ օր՝ դիպւածաբար՝ տեսաւ իմ մի քանի ոտանաւորներս, որոնց վրայ նոր ձուլած տառեր էի ածել իրեւ անպէտք թղթերի վրայ, դուրս քաշեց այդ թղթերը և սկսեց կարդալ: Գրածներս երգիծաբանութիւններ էին նոյն իսկ ձուլաբանում կատարող ծիծաղելի անցքերի վրայ, որոնց մէջ ամենից թունդը խոհարարի մասին դրածս էր: Նրա մէջ ցոյց էի տւել, թէ ինչպէս նա մեզ՝ աշակերտներիս անմարս բաներով է կերակրում և այն էլ շատ նւազ, չընայած, որ ահազին ծախը է ցոյց տալիս: Հէնց նոյն օրը դուրս արաւ խոհարարին և աւելի լաւը բերաւ: Այդ օրւանից սկսեց ինձ վրայ առանձին և լուրջ ուշադրութիւն դարձնել ինձ մի նոր գիւտ համարելով: Ամեն կիրակի և տօն օրերին հրաւիրում էր տուն ճաշի, գրքեր էր տալիս կարդալու, իր դրած նամակները, որ այդ ժամանակ շատ էր գրում Միհթարեանների վրայ ձուլաբանի և տապարանի մասին, ինձ էր արտադրել տալիս: Զնշեց ինձ հետ արած պայմանը, որով տարե-

կան պիսի ստանայի լիսուն մանէթ և վարձ նշանակեց ըստ աշխատութեան, որով տարեկան ստացայ փոխանակի լիսուն մանէթի վեց հարիւր մանէթ և աւելի ես: Երբ տպարանը բացւեց և ես սկսեցի շարել առանց վարսետի, նա ինձ տւառ աշկերտներ, որոնք ինձ համար էին շարում, իսկ ոռոճիկն ինքն էր տալիս: Աշակերտներ ունենալով ես ժամանակ էի վաստակում ընթերցանութեամբ պարապելու:

Այս ժամանակ ահա, երբ իմ բարի համբաւը հասաւ դիւզ, հայրս եկաւ ինձ մօտ, հաշուեց ինձ հետ և արտասուքն աչքերին բացականչեց.

—Փառք իմ Ստեղծողին, որ քեզ չուր ու կրակ գցելուց յետոյ վերջապէս օրինաւոր մարդ շինեց: Ապրես, որդիս, ապրես, հիմա կարող եմ ասել, որ իմ հարազատ ծնունդն ես, իմ սիրելի զաւակս: Ես էլ քիչ դառն օրեր չեմ քաշել, ես էլ դժութիւն շատ եմ արել, բայց դու չափն անց կացրիր, այնպէս որ ես չեի կարող ուրիշ կերպ վարւել, ուրեմն ներելի է և ի վարմունքս դէպի քեզ:

—Ի հարկէ ներելի է, ասացի, հայր: Ամեն բանի մէջ Աստծոց մատը կաց, եթէ դու այնպէս չը վարւէիր, ես էլ այսպէս չեի դառնալ կամովին:

Ահա այս փոփոխութեանս և իմ հօր ասելով օրինաւոր մարդոց դառնալուս համար ես պարտական եմ պ. Համբարձում՝ Էնֆիանցնեանցին, մինչև այդ ժամանակ առաջին անգամ ինձ պատահած միակ լաւ մարդուն: Դրա շնորհիւ ես լնկայ և ուրիշ լաւ մարդկանց ըրջանի մէջ, դա ինձ ծանօթացրեց իր իսկ պաշտած մարդուն — Հալսվերդեանին: Ես էի Շնորհիւ ի շարուզը, որով վարձայ նրա խմբագրի՝ պ. Ազարէկեանի սիրելի Նազրիկը: Գրաշար էի, այն, բայց օրինաւոր դրաշար էի. Հեղինակներն ինձ էին յանձնում՝ իրանց դրքերի սրբագրութիւնը: «Կոռուկ» ի սրբագրողը ող. Պոռշեանցն էր, բայց դա հիւանդանում էր ստէպ և այն ժամանակ ես ու Համբարձում աղան էինք սրբագրում միասին նոյն իսկ Ազարէկեանի դրածները, որ նոր էր սկսել արևելեան բարբառով դրել:

Այս շրջանի մասին ես գրել եմ իմ «Մի երես նորագոյն պատմութիւնից» բրօշիւրիս մէջ 16—20 երեսներում:

Նատ կը սիսալի մէկը, եթէ այդ նոր վերածնւած շրջանը մեր այսօրւա շրջաններին նմաննեցնէ բարոյական կողմից։ Այն ժամանակ նիւթական շահի համար ոչ ոք չէր մոածում. այն ժամանակ անձ և գանձ զոհաբերում էին հաւասարապէս առանց որ և է յետին մոքի։ Տպարան հիմնելը պէտք է ենթիածնեանցի և ընկերութեան վրայ ահագին ծախը նստեց։ Պօլսից վարպետներ հրաւիրեցին ահաղին ոռճկով, թէկ զրոշանոց մարդիկ դուրս եկան։ Մէկ օր ես դուրս վռնդեցի դրանց տպարանից իրքեւ անպէտք և ցիմար շառլատանների։ Համբարձում աղան կանչեց ինձ և մեղմ յանդիմաննութեամբ ասաց։ — Ինչպէս դուրս ես արել, այնպէս էլ գնա հրաւիրի որ գան, ես նրանց մօտ գնացողը ։ Եմ, քանի որ այնքան ցիմար են, որ փոխանակ քեզ դուրս անելու, իրանք են դուրս դնում. ովէ լսել, որ վարպետն աշակերտից վռնդուի։ Ես կատարեցի բարերարիս հրամանը Պօօշեանցի միջնորդութեամբ։ Նա վարպետներիս հաշտեցրեց ինձ հետ, որոնք կը ին տպարան եկան և շարունակեցին իրանց կեղծ վարպետութիւնը։ Այս վարպետների միջնորդը եղել էր Մատթէոս կաթողիկոսը, այս պատճառով էլ երեք տարի զուր տեղը առնձիկ ստացան։

«Կոռունկը» առաջին իսկ տարին մեծ թուով բաժանորդ ունէր։ Նա մացրեց մեր մէջ բուն ազգային ուղղութիւն և թև տւառ թիրֆլիսի նորածին երիտասարդութեանը։ Ազնւութիւն և շիտակութիւն էր փայլում երիտասարդութեան մէջ, անկեղծ ազդասիրութիւն կար։ Աակացն ոչ ոք մեր գրական դործի վրայ այնքան մեծ զոհողութիւն չի արել, այդ ժամանակ ինչքան պէտք էր մարձում կննիածնեանցը, որի տունն իսկ այդ ժամանակ շարունակ մի ժողովարան էր և մի ժաշարան։ Նրա նախաղիծը շատ լայն էր, իսկ իր ժամանակակիցների հասկացողութիւնը շատ սահմանափակ էր առաջանակ և ուղղութիւն էր մի մեծ լնկերութիւն կազմել, աշխարհականների մի ուխտ, որ պիտի ունենար Մխիթարեանների պէս հարուստ և գեղեցիկ տպարան և ձուլարան և մի հարուստ գթանդարան վերծանութեան, աշխինքն՝ մեծ մատենադարան, պիտի ունենար իր սեփական ամսագիրն ու լրագիրը, բացց անհնարին էր այն ժամանակ այս ծրագիրն իրազործել, քանի որ հասուն մաքի տէր մարդկանց թիւը շատ սահմանափակ էր։ Հունձ շատ կար, բայց

մշակ սակաւ. հաւատացեալների թիւն աճում էր, բայց հովիւներ չը կային: Մեր գրական գործիչները բոլորն էլ դեռ ևս նորուս և թերուս մարդիկ էին. լեզուն նոյնպէս նոր էր սկսում կազմակերպութիւն, նոր էր ձեռնարկում հասարակական թատերերգութեան, նոր էին բարեկարգուում ուսումնարանները: Այս նոր և թարմ հոսանքի միակ պատճառը ամբողջ պետութեան մէջ նոր սկսող բեֆորմներն էին, որոնք մեզ համար անակնկալ էին, նրանցից շահւելու ոչ մի նախապատրաստութիւն չունէինք. Տերունի ներսէսի հեռատեսութիւնը մինչև այդ մօտիկութիւնը չէր հասել, մեր մտաւոր և բարոյական վերածնութիւնն սկսեց Մատթէոսի օրով:

(Կը շարունակուի)